



ՀՀ և ԻԻՀ ֆուտբոլի ֆեդերացիաների միջև համագործակցության փոխըմբռնման հուշագիր

1-ԻԻՀ ֆուտբոլի ֆեդերացիան և ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիան՝ որպես այդ երկրներում ֆուտբոլի ղեկավար մարմիններ, գտնվում են ֆուտբոլի համաշխարհային ֆեդերացիաի (ՖԻՖԱ), Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միության (ՈՒԵՖԱ) և Ասիայի ֆուտբոլի կոնֆեդերացիայի (Էյ Էֆ Սի) վերահսկողության ներքո:

2-Փոխըմբռնման հուշագրի նպատակը երկու երկրների միջև համագործակցության մակարդակի բարձրացումը և հարաբերությունների խորացումն է:

3-Փոխըմբռնման հուշագիրը վավեր է ուժի մեջ մտնելու պահից՝ երկու տարի: Վավերականության ժամկետն ավարտվելուց հետո փոխըմբռնման հուշագիրը կերկարաձգվի ևս 1 տարով, եթե կողմերից որևէ մեկը փոխըմբռնման հուշագրի վավերականության ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ գրավոր կերպով չդիմի այն լուծարելու համար և կնքվի նոր փոխըմբռնման հուշագիր՝ նոր պայմաններով:

4-Փոխըմբռնման հուշագիրը համարվում է վավերական այն ստորագրելու պահից:

Կողմերը հայտնում են իրենց համաձայնությունը առ այն, որ սույն փոխըմբռնման հուշագիրը միտված է համագործակցության զարգացմանը և բարի կամքի դրսևորմանը, և կողմերը չեն կրում որևէ օրինական պարտավորություններ:

Համագործակցության նպատակը

Համաձայն վերը նշված կետերի՝ կողմերը համաձայնեցին.

1-համագործակցել երկու երկրների ֆուտբոլի ֆեդերացիաների միջև հարաբերությունները ամրապնդելու և ֆուտբոլը զարգացնելու ուղղությամբ:

2-Պահպանել ֆուտբոլի արժեքներն ու ավանդույթները այն իրականության ներքո, որ ֆուտբոլը ոչ միայն տնտեսական գործունեություն է, այլև գործիք միջազգային հասարակական ըմբռնման համար:

3-Կազմել աշխատանքային խումբ փոխըմբռնման հուշագրի շրջանակում ծրագրերը և նախաձեռնությունները իրագործելու նպատակով: Կողմերը յուրաքանչյուր նախագծի հնարավորությունների, ժամանակացույցի և ֆինանսավորման մասին կկազմեն առանձին փաստաթուղթ:

Փոխըմբռնման հուշագիրը կներառի համագործակցության ստորև նշված ոլորտները.

Լիզայի գործունեությունը, այդ թվում համաձայնեցումներ խաղեր կազմակերպելու, մամուլի լուսաբանման, մարկետինգի, կոմերցիոն իրավունքի, կառավարման և ակումբի կառավարման ուղղությամբ:

Ա) Հնարավորությունների ստեղծում տարբեր տարածքներում Իրանի ազգային հավաքականի մարզումների համար:

Բ) Մարզիչների և դարպասապահների ուսուցում և մարզումներ:

Գ) Մրցավարների փոխանակում և մակարդակի բարձրացում:

Դ) Ֆուտբոլի և ֆուտզալի լիգաներում ֆուտբոլիստների փոխանակում և ֆուտզալի ընկերական միջազգային խաղերի կազմակերպում:

Ե) Լիզայի ակումբների և ազգային հավաքականի կանանց ֆուտբոլի մակարդակի բարձրացում, համաձայնեցումներ ընկերական միջազգային խաղեր կազմակերպելու ուղղությամբ:

Ձ) Ազգային հավաքականների ընկերական խաղերի, ճամբարի կազմակերպում ֆուտբոլային տարբեր տարիքային խմբերի համար, ֆուտզալի և ծովափնյա ֆուտբոլի կազմակերպում:

Է) Երիտասարդների զարգացման ծրագրեր:

Ը) Ֆուտբոլի դասավանդման հիմքի կառուցվածքային վերանայում:

Թ) Ֆուտզալի զարգացում:

Ժ) Փորձագետների փոխանակում գիտության և մարզական բժշկության դասավանդման ոլորտում:

Ի) Փորձի փոխանակում մարկետինգի ոլորտում:

Լ) Փորձի փոխանակում Ֆուտբոլի ակադեմիայի կառուցվածքի և կառավարման ոլորտում:

Խ) Փորձի փոխանակում տեխնիկական և վարչական անձնակազմի և կառավարման ոլորտներում:

Տ) Փորձագետների փոխանակում մարզական սարքավորումների կառավարման և կառուցման, գիտական միջոցների, այդ թվում, արհեստական և բնական սիզամարգերի ինժեներական ոլորտում:

Ամսաթիվ 10/12/2016

**ԻԻՀ Ֆուտբոլի ֆեդերացիայի
կողմից
(FFIRI)**

**ՀՀ Ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից՝
(FFA)**

**Պարոն Մեհդի Թաջ
Նախագահ**

**Պարոն Ռուբեն Հայրապետյան,
Նախագահ**



ՓՈԽՐԱԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Իրանի Իսլամական Հանրապետության Ֆուտբոլի Ֆեդերացիայի
Ներկայացված նախագահ պարոն Մեհդի Թաջի կողմից
ԵՎ
Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիայի
Ներկայացված նախագահ պարոն Ռուբեն Հայրապետյանի կողմից

ՄԻՋԵՎ

ՀԱՎԵԼՎԱԾ

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՆ (ԻԻՀՖՖ) եվ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՆ (ՀՖՖ) ազգային մարմիններ են, որոնք
պատասխանատու են ֆուտբոլի ղեկավարման, մասսայականացման և զարգացման
համար, համապատասխանաբար Իրանի Իսլամական Հանրապետությունում և
Հայաստանի Հանրապետությունում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՆ (ՀՖՖ) համաձայն է Աշխարհի 2018 թ.
առաջնությունից առաջ 2 ամսվա ընթացքում (կոնկրետ ժամկետը կհստակեցվի
Աշխարհի առաջնության մեկնարկից 5 ամիս առաջ) ՀՖՖ Տեխնիկական
կենտրոն/Ֆուտբոլի ակադեմիան՝ իր բոլոր ենթակառուցվածքներով (ներառյալ՝
լողավազան, մարզասրահ, բնական և արհեստական խոտածածկով խաղադաշտեր,
ճաշարան և հյուրանոց), տրամադրել ԻԻՀ ազգային հավաքականին:

**ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ
ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ (ԻԻՀՖՖ)
ԿՈՂՄԻՑ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ
ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ (ՀՖՖ) ԿՈՂՄԻՑ.**

**Պարոն Մեհդի ԹԱՋ
նախագահ**

**Պարոն Ռուբեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ,
նախագահ**